Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Լրամշակված տարբերակ

Կ-018-05.06.2017-ՏՀ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-18-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածները շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 5. Կարգավորման հիմնական սկզբունքները**

1. Կարգավորման հիմնական սկզբունքներն են՝

1) կարգավորման իրականացումն ինքնավար պետական մարմնի կողմից՝ օրենքներով սահմանված իրավասությունների շրջանակում.

2) կարգավորող մարմնի որոշումների ընդունման կոլեգիալությունը և անկախությունը.

3) կարգավորման թափանցիկության ապահովումը հանրության համար.

4) սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականության բացառումը.

5) սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը՝ սպառողներին որակյալ ծառայությունների մատուցումը երաշխավորելու համար անհրաժեշտ իրավատնտեսական նախադրյալների ձևավորման և ծառայությունների հիմնավորված սակագների սահմանման միջոցով՝ միաժամանակ ապահովելով ներդրողներին, ռիսկերին համարժեք, ողջամիտ հասույթ ստանալու հնարավորությունը.

6) մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակումը, ինչպես նաև հանրային ծառայությունների

ոլորտում ոչ մրցակցային շուկաների առաջացման դեպքում կարգավորման ներդրումը.

7) հանրային ծառայությունների ոլորտում շուկաներ մուտքի խոչընդոտների կրճատումը և կարգավորվող անձանց կողմից մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) հասանելիության կանոնների պահպանման ապահովումը.

8) հասցեական կարգավորումը.

9) հանձնաժողովի կողմից սահմանվող սակագների համապատասխանությունը մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) սպասարկման որակին:

Հոդված 6. Կարգավորող մարմինը

1. Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով):

2. Հանձնաժողովն ինքնավար մարմին է:

3. Հանձնաժողովն ունի կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ և անհատականացման այլ միջոցներ: Հանձնաժողովի կնիքի վրա պատկերված են Հայաստանի Հանրապետության զինանշանը և «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով» բառերը: Հանձնաժողովի գտնվելու վայրը Երևան քաղաքն է:

4. Հանձնաժողովն, իր իրավասության սահմաններում, իրավասու է Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող, ինչպես նաև իր գործունեության նպատակներին և ամրացված գույքի նշանակությանը համապատասխան, տիրապետել, օգտագործել և տնօրինել այդ գույքը:

Հոդված 7. Հանձնաժողովի կազմավորման կարգը և անդամներին ներկայացվող պահանջները

1. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ հանձնաժողովի նախագահ և չորս անդամ: Հանձնաժողովի անդամների պաշտոնները համարվում են քաղաքացիական պաշտոններ:

2. Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ հինգ տարի պաշտոնավարման ժամկետով, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերի: Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոն առաջանալու դեպքում հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սույն օրենքի 7.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձը դիմում է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ ներկայացնելով տվյալ պաշտոնի թեկնածուի համար անհրաժեշտ՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ պաշտոնավարման ամբողջ ժամկետով նշանակվել հանձնաժողովի անդամ, ներառյալ՝ հանձնաժողովի նախագահ:

3. Հանձնաժողովի անդամները նշանակվում են տարեկան ռոտացիայի սկզբունքով՝ յուրաքանչյուր տարի հանձնաժողովի մեկ անդամի նշանակմամբ:

4. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ, առնվազն տասը տարվա աշխատանքի փորձառություն ունեցող (որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում) և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք: Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն, իսկ մյուսները՝ կարգավորվող ոլորտներից որևէ մեկում՝ սույն մասով նախատեսված

ժամկետով աշխատանքային ստաժ: Կարգավորվող ոլորտի ստաժ է համարվում նաև այդ ոլորտում պետական կառավարում կամ կարգավորում իրականացնող մարմիններում կամ այդ ոլորտում սպառողների հետ կապերի գծով աշխատանքային ստաժը:

5. Հանձնաժողովի անդամը պաշտոնավարում է մինչև վաթսունհինգ տարին լրանալը:

6. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում հանձնաժողովի անդամի նշանակման համար սույն հոդվածով սահմանված ընթացակարգով նշանակվում է հանձնաժողովի նոր անդամ՝ պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա հանձնաժողովի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը:

7. Այն դեպքում, երբ հանձնաժողովի նախագահ է նշանակվում հանձնաժողովի անդամներից մեկը, ապա նա պաշտոնավարում է մինչև իր՝ որպես հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետի ավարտը: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը:

8. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, ով դատապարտվել է հանցագործության կատարման համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, ունի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած ցանկով նախատեսված դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր՝ 7.1-րդ և 7.2-րդ հոդվածներով.

«**Հոդված 7.1. Հանձնաժողովի նախագահը և անդամները**

1. Հանձնաժողովի նախագահը՝

1) համակարգում և ապահովում է հանձնաժողովի բնականոն աշխատանքը.

2) հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է հանձնաժողովի որոշումներն ու նիստերի արձանագրությունները.

3) իր լիազորությունների շրջանակում ընդունում է հրամաններ, հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, տալիս լիազորագրեր և կնքում պայմանագրեր.

4) իր իրավասությունների սահմաններում ներկայացնում է հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, առանց լիազորագրի հանդես է գալիս հանձնաժողովի անունից:

2. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա հանձնարարությամբ փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը, իսկ նման հանձնարարականի անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի այն անդամը, որն ավելի երկար է աշխատում այդ պաշտոնում:

3. Հանձնաժողովի անդամն իրեն վերապահված լիազորությունների սահմաններում հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, նշագրում հանձնաժողովի որոշումներ և այլ փաստաթղթեր:

4. Հանձնաժողովի անդամների միջև լիազորությունների և աշխատանքային պարտականությունների բաշխման հետ կապված հարցերը կարգավորվում են հանձնաժողովի որոշմամբ:

Հոդված 7.2. Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարումը և դադարեցումը

1. Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետը լրանում է նրա նշանակման օրվան հաջորդող հինգերորդ տարվա նույն օրը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերի:

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

1) լրացել է նրա պաշտոնավարման առավելագույն տարիքը.

2) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

3) նա՝ նախապես տեղեկացնելով վարչապետին, իր հրաժարականի մասին գրավոր դիմումը պաշտոնապես ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին.

4) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

5) նրա նկատմամբ կայացվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, մեղադրական դատավճիռ կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով.

6) նա մահացել է:

3. Հանձնաժողովի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել, եթե՝

1) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել Հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություն.

2) նա երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում բացակայել է Հանձնաժողովի նիստերի առնվազն կեսից.

3) նա մեկ տարվա ընթացքում ավելի քան երկու անգամ անհարգելի բացակայել է Հանձնաժողովի նիստերից.

4) նա խախտել է Հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները.

5) նա խախտել է քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը.

6) ի հայտ են եկել փաստեր, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին:

4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սույն օրենքի 7.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձը գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածները շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 8. Հանձնաժողովի աշխատակազմը**

1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է հանձնաժողովի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) միջոցով, որի ղեկավարումն իրականացնում է աշխատակազմի ղեկավարը: Աշխատակազմի աշխատանքը կանոնակարգվում է սույն օրենքով և հանձնաժողովի որոշումներով:

2. Աշխատակազմն իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով հանձնաժողովին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիաիրավական հարաբերություններին նրա մասնակցությունը:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավասությունները, բացառությամբ հայցվոր և պատասխանող հանդես գալու իրավունքից, հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են պատվիրակվել հանձնաժողովի աշխատակազմին:

4. Հանձնաժողովի աշխատակազմի կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, աշխատակիցների թվաքանակը և աշխատակազմի գործունեության կազմակերպմանն առնչվող ներքին կանոնակարգային այլ հարցերը կարգավորվում են հանձնաժողովի որոշումներով: Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ:

Հոդված 9. Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի աշխատակիցների իրավունքների սահմանափակումները և պատասխանատվությունը

1. Հանձնաժողովի անդամը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ

մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքից՝ պայմանով, որ այդ աշխատանքները չեն ֆինանսավորվում կարգավորվող անձանց կողմից:

2. Հանձնաժողովի անդամը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հանձնաժողովի անդամն իր հրապարակային ելույթներում պետք ցուցաբերի քաղաքական զսպվածություն:

3. Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի աշխատակիցներն իրենց պաշտոնավարման ընթացքում չեն կարող ունենալ կարգավորվող անձանց արժեթղթեր, բաժնեմաս կամ դրանցում կատարել ներդրումներ:

4. Հանձնաժողովի անդամն իրավունք չունի իր պաշտոնավարման ժամկետը լրանալու կամ լիազորությունները վաղաժամկետ դադարելու պահից մեկ տարվա ընթացքում զբաղեցնել հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերության՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոն:

5. Սույն օրենքի պահանջները խախտելու համար հանձնաժողովի պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 10-րդ հոդվածը:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 11. Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգումը**

1. Հանձնաժողովը օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ, որոնք իրենց բնույթով կարող են լինել ենթաօրենսդրական նորմատիվ, անհատական կամ ներքին (լոկալ) իրավական ակտեր:

2. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող կամ հանձնաժողովի ներքին կանոնակարգային հարցեր:

3. Հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն գումարվում են ամիսը մեկ անգամ: Հանձնաժողովն ըստ անհրաժեշտության կարող է անցկացնել նաև արտահերթ նիստեր: Հանձնաժողովի հերթական և արտահերթ նիստ հրավիրելու և անցկացնելու կարգը սահմանում է հանձնաժողովը:

4. Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված առանձին հարցեր կարող են նշվել որպես քննարկման ոչ ենթակա հարցեր, եթե դրանք ունեն տեխնիկական կամ ներքին կանոնակարգային բնույթ: Եթե քննարկման ոչ ենթակա հարցի մասին հայտարարելուց հետո այդ հարցի վերաբերյալ ներկայացվում է առարկություն կամ առաջարկություն, ապա այն պետք է քննարկվի և ընդունվի սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

5. Հանձնաժողովն իր սահմանած կարգի համաձայն հայտարարում է հանձնաժողովի նիստերի անցկացման վայրը, օրը և ժամը, հնարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց ու հասարակության ներկայացուցիչներին մասնակցել նիստերին՝ հաշվի առնելով իր վարչական շենքի հնարավորությունները, ստանալ օրակարգը և քննարկվող նյութերը, ներկայացնել տեղեկություններ և հանդես գալ ելույթներով:

6. Եթե հանձնաժողովի նիստում քննարկվում են սպառողների համար սահմանվող սակագները, սակագների հաշվարկման մեթոդիկաները, բնագավառների (համակարգերի) կառուցվածքին, սպառողների սպասարկման որակին և պայմաններին վերաբերող հարցեր, ապա հանձնաժողովն այդ մասին ողջամիտ ժամկետում իրազեկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, կարգավորվող ոլորտի իրավասու պետական մարմնին և սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին՝ հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, հանդես գալ ելույթներով և առաջարկություններով:

7. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի առնվազն երեք անդամ և այն վարում է հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 7.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովի նախագահի պաշտոնեական պարտականությունները կատարող հանձնաժողովի անդամը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ: Որոշումն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

8. Հանձնաժողովի կառուցվածքը, հանձնաժողով դիմումների ներկայացման ու քննարկման, նիստերի կազմակերպման և անցկացման կարգը, ինչպես նաև հանձնաժողովի լիազորությունների իրականացմանն առնչվող ներքին կանոնակարգային այլ հարցերը կարգավորվում են հանձնաժողովի որոշումներով:

9. Հանձնաժողովն օրենքով նախատեսված դեպքերում ունի կարգավորվող անձանցից տեղեկություններ պահանջելու և իր ներկայացուցիչների միջոցով վերջիններիս տարածք մուտք գործելու իրավունք:

10. Հանձնաժողովն իր աշխատանքներում իրավասու է վճարովի հիմունքներով ներգրավել անկախ փորձագետների:

11. Հանձնաժողովն ապահովում է իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը զանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային էջի և այլ միջոցներով:»:

Հոդված 6. Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 16. Հանձնաժողովի ֆինանսավորումը**

1. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի կազմում է հաջորդ տարվա իր պահպանման ծախսերի նախահաշիվը և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ բյուջետային գործընթացի համար սահմանված կարգով և ժամկետներում:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է սույն օրենքի 18-րդ հոդվածի համաձայն ձևավորված՝ հանձնաժողովի աշխատավարձի

տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.75 գործակցով: Հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծության և սույն օրենքի 18-րդ հոդվածի համաձայն ձևավորված՝ հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունը ուղղվում է հանձնաժողովի պահպանման և կարողությունների զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների սոցիալական ծրագրերի իրականացման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված՝ հանձնաժողովի այլ ֆոնդերի, որոնց չափերը (մեծությունը) սահմանում է հանձնաժողովը: Նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից յուրաքանչյուրից պարգևատրմանն ուղղվող միջոցները չեն կարող գերազանցել հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդի 30 տոկոսը:

3. Հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանձնաժողովի անդամների և աշխատակիցների նյութական խրախուսման և զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների սոցիալական ծրագրերի իրականացման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված՝ հանձնաժողովի այլ ֆոնդերի ծախսման կարգը սահմանում է հանձնաժողովը:

5. Սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան հաշվարկված հանձնաժողովի տարեկան բյուջեի մեկ տոկոսի չափով հաշվարկված գումարը, որը ներառվում է հանձնաժողովի պահպանման ծախսերում, ուղղվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ վերջիններիս կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով: Յուրաքանչյուր տարի հաշվարկված գումարը հասարակական կազմակերպություններին տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված պետական լիազոր

մարմնի կողմից: Սույն մասում նշված հասարակական կազմակերպությունների ընտրության, գումարի տրամադրման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 7. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 7-րդ, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող 7.2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում Հանրապետության նորընտիր Նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքի ուժով՝ որպես ինքնավար մարմին, հանձնաժողովի առաջին կազմը ձևավորվում է հետևյալ կերպ՝ Հանրապետության նորընտիր Նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ սույն օրենքով սահմանված կարգով նշանակում է հանձնաժողովի նախագահին և չորս անդամներին պաշտոնավարման հետևյալ ժամկետներով՝

1) հանձնաժողովի նախագահ՝ 5 տարի.

2) հանձնաժողովի անդամ՝ 4 տարի.

3) հանձնաժողովի անդամ՝ 3 տարի.

4) հանձնաժողովի անդամ՝ 2 տարի.

5) հանձնաժողովի անդամ՝ 1 տարի:

3. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի այն անդամները, որոնք նշանակվել են մինչև Հանրապետության նորընտիր Նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը, շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ օրենքով սահմանված ժամկետի ավարտը, բայց ոչ ավելի, քան սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նշանակումները կատարելը, մասնավորապես՝

1) Հանձնաժողովի գործող նախագահը՝ մինչև Հանձնաժողովի նոր նախագահի նշանակումը.

2) Հանձնաժողովի յուրաքանչյուր նոր անդամի նշանակմամբ դադարում են Հանձնաժողովի գործող չորս անդամներից նրա լիազորությունները, ով մյուս անդամներից ավելի շուտ է նշանակվել: Հանձնաժողովի գործող անդամի լիազորությունները դադարում են նաև այն դեպքում, եթե վերջինս սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով նշանակվել է հանձնաժողովի նախագահ կամ հանձնաժողովի անդամ:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ներկա իրավիճակը, առկա խնդիրները

Ներկայումս առաջացել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ օրենք) ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու անհրաժեշտություն, որով կապահովվի ինքնավար մարմիններին վերաբերող բարեփոխումների իրականացումը փոփոխված Սահմանադրության համատեքստում: Բացի այդ, անհրաժեշտ է օրենքով նախատեսված կարգավորման հիմնական սկզբունքները համապատասխանեցնել ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի 20-րդ հավելվածով սահմանված՝ բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընդհանուր սկզբունքներին և ծրագրի պահանջներին: Միաժամանակ, առկա է անհրաժեշտություն ապահովել ծրագրով նախատեսված որոշ այլ դրույթների իրացումը:

Բացի այդ, օրենքն ընդունվել է դեռևս 2003 թվականին և դրա գործողության ընթացքում ի հայտ են եկել որոշ կիրառական բացեր, որոնք շտկելու համար նախագծով առաջարկվում է այն լրացնել որոշ նոր դրույթներով, ինչպես նաև հստակեցնել են մի շարք դրույթներ:

2. Առաջարկվող լուծումները

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) մշակումը պայմանավորված է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությունից, ինչպես

նաև բխում է Ասիական զարգացման բանկի կողմից մշակված «Կարգավորման անկախության բարձրացում» հաշվետվության հիման վրա ՀՀ կառավարության 2016թ. սեպտեմբերի 16-ի թիվ38 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՀՀ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման անկախության բարձրացման նպատակով իրավական գործողությունների ծրագրից (այսուհետ՝ ծրագիր):

Մասնավորապես.

1) Սահմանադրական փոփոխություններից բխող անհրաժեշտ կարգավորումը կապված է ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածով սահմանված կարգավորման հետ, որով սահմանվում է ինքնավար մարմինների, այդ թվում՝ նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) անդամների նշանակման նոր կարգ՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրության միջոցով: Ուստի նախագծով առաջարկվող փոփոխությամբ գործող կարգավորումը համապատասխանեցվել է ՀՀ Սահմանադրությանը՝ միաժամանակ ամրագրելով սահմանադրական նորմի իրացման մեխանիզմներ:

Ծրագրի հիման վրա սահմանվել են հանձնաժողովի նոր անդամների կրթությանը և աշխատանքային փորձին վերաբերող լրացուցիչ չափանիշներ: Հանվել է հանձնաժողովի անդամի՝ աշխատանքից ազատվելուց հետո երեք տարի կարգավորվող ոլորտում չաշխատելու սահմանափակումը: Սահմանվել է մեկ տարի, ընդ որում՝ միայն ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի համար: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա սահմանվել է նաև, որ հանձնաժողովի անդամը չպետք է ունենա այլ երկրի քաղաքացիություն և պետք է տիրապետի հայերենին: Բացի այդ, ծրագրին համապատասխան սահմանափակվել է հանձնաժողովի անդամի՝ ավելի քան երկու անգամ անընդմեջ պաշտոնում նշանակվելու իրավունքը:

2) Նախագծով լրացվել են հանձնաժողովի անդամի նշանակմանը խոչընդոտող, ինչպես նաև նրա լիազորությունների դադարեցման հիմքերը, այդ թվում՝ հանձնաժողովի անդամի պաշտոնից հրաժարական տալու կարգը, որը

համապատասխանեցվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքին:

3) Ծրագրի հիման վրա լրամշակվել են հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման հիմնական սկզբունքները: Դրանք համապատասխանեցվել են ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի 20-րդ հավելվածի 3-րդ կետով սահմանված՝ բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընդհանուր սկզբունքներին և ծրագրին:

4) Ծրագրով նախատեսված պահանջի կատարումն ապահովելու համար սահմանվել է ֆինանսավորում սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների համար, ըստ որի հանձնաժողովը կարգավորման վճարներից գոյացած իր տարեկան բյուջեի 1%-ը պետք է ուղղի հատուկ ֆոնդի՝ ոլորտում նրանց մասնակցությունը խթանելու համար:

5) Լրամշակվել են հանձնաժողովի նախագահի իրավասությունները, ինչպես նաև նախատեսվել են հանձնաժողովի անունից պաշտոնական փաստաթղթեր ստորագրելու, հանձնաժողովի որոշումների և այլ փաստաթղթեր նշագրելու՝ հանձնաժողովի անդամի իրավունքների վերաբերյալ դրույթներ:

6) Մանրամասնվել են հանձնաժողովի աշխատակազմին վերաբերող դրույթները, այն է՝ ընդհանրական կերպով ամրագրվել են աշխատակազմի և նրա կազմում ներառող կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները:

7) Նախագծով ամրագրվել են նաև հանձնաժողովի արտահերթ նիստ անցկացնելու իրավական հիմքերը, ինչպես նաև հանձնաժողովի նիստում քննարկման ոչ ենթակա հարցեր քննարկելու կարգը:

ր) Նախագծով կատարվել են որոշ այլ հստակեցումներ ևս:

Նախագծի ընդունման նպատակը հանձնաժողովի համար գործառնական անկախության ավելի լայն հնարավորությունների ստեղծումը, հանձնաժողովի մանդատն իրագործելու կարողությունների բարելավումն է, ինչն էլ բխում է հանրային կարգավորման շահերից:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագծի մշակման աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման անկախության բարձրացման նպատակով իրավական գործողությունների» ծրագրի 7-րդ կետով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը կնպաստի հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման արդյունավետության բարձրացմանը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-018-05.06.2017-ՏՀ-011/0 ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	**5**
1.	ՀՀ Կառավարություն	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագիծը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-18-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածները շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 5. Կարգավորման հիմնական սկզբունքները** 1. Կարգավորման հիմնական սկզբունքներն են՝ 1) կարգավորման իրականացումն ինքնավար պետական մարմնի կողմից՝ օրենքներով սահմանված իրավասությունների շրջանակում. 2) կարգավորող մարմնի որոշումների ընդունման կոլեգիալությունը և անկախությունը. 3) կարգավորման թափանցիկության ապահովումը հանրության համար. 4) սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականության բացառումը. 5) սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը՝ սպառողներին որակյալ ծառայությունների մատուցումը երաշխավորելու համար անհրաժեշտ իրավատնտեսական նախադրյալների ձևավորման և ծառայությունների հիմնավորված սակագների սահմանման միջոցով՝ միաժամանակ ապահովելով ներդրողներին, ռիսկերին համարժեք, ողջամիտ հասույթ ստանալու հնարավորությունը. 6) մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակումը, ինչպես նաև հանրային ծառայությունների ոլորտում ոչ մրցակցային շուկաների	Ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է

			առաջացման դեպքում կարգավորման ներդրումը. 7) հանրային ծառայությունների ոլորտում շուկաներ մուտքի խոչընդոտների կրճատումը և կարգավորվող անձանց կողմից մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) հասանելիության կանոնների պահպանման ապահովումը. 8) հասցեական կարգավորումը. 9) հանձնաժողովի կողմից սահմանվող սակագների համապատասխանությունը մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) սպասարկման որակին: **Հոդված 6. Կարգավորող մարմինը** 1. Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնա-ժողով): 2. Հանձնաժողովն ինքնավար մարմին է: 3. Հանձնաժողովն ունի կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ և անհատականացման այլ միջոցներ: Հանձնաժողովի կնիքի վրա պատկերված են Հայաստանի Հանրապետության զինանշանը և «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով» բառերը: Հանձնաժողովի գտնվելու վայրը Երևան քաղաքն է: 4. Հանձնաժողովն, իր իրավասության սահմաններում, իրավասու է Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող, ինչպես նաև իր գործունեության նպատակներին և ամրացված գույքի նշանակությանը համապատասխան, տիրապետել, օգտագործել և տնօրինել այդ գույքը: **Հոդված 7. Հանձնաժողովի կազմավորման կարգը և անդամներին ներկայացվող պահանջները** 1. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ հանձնաժողովի նախագահ և չորս անդամ: Հանձնաժողովի անդամների պաշտոնները համարվում են քաղաքացիական պաշտոններ: 2. Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ հինգ տարի պաշտոնավարման ժամկետով, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերի: Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոն առաջանալու դեպքում հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սույն օրենքի 7.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձը դիմում է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ ներկայացնելով տվյալ պաշտոնի թեկնածուի համար անհրաժեշտ՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ պաշտոնավարման ամբողջ ժամկետով նշանակվել հանձնաժողովի անդամ, ներառյալ՝ հանձնաժողովի նախագահ:		

			3. Հանձնաժողովի անդամները նշանակվում են տարեկան ռոտացիայի սկզբունքով՝ յուրաքանչյուր տարի հանձնաժողովի մեկ անդամի նշանակմամբ: 4. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ, առնվազն տասը տարվա աշխատանքի փորձառություն ունեցող (որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում) և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք: Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն, իսկ մյուսները՝ կարգավորվող ոլորտներից որևէ մեկում՝ սույն մասով նախատեսված ժամկետով աշխատանքային ստաժ: Կարգավորվող ոլորտի ստաժ է համարվում նաև այդ ոլորտում պետական կառավարում կամ կարգավորում իրականացնող մարմիններում կամ այդ ոլորտում սպառողների հետ կապերի գծով աշխատանքային ստաժը: 5. Հանձնաժողովի անդամը պաշտոնավարում է մինչև վաթսունհինգ տարին լրանալը: 6. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում հանձնաժողովի անդամի նշանակման համար սույն հոդվածով սահմանված ընթացակարգով նշանակվում է հանձնաժողովի նոր անդամ՝ պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա հանձնաժողովի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը: 7. Այն դեպքում, երբ հանձնաժողովի նախագահ է նշանակվում հանձնաժողովի անդամներից մեկը, ապա նա պաշտոնավարում է մինչև իր՝ որպես հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետի ավարտը: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը: 8. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, ով դատապարտվել է հանցագործության կատարման համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, ունի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած ցանկով նախատեսված դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն:»: **Հոդված 2.** Օրենքը լրացնել նոր՝ 7.1-րդ և 7.2-րդ հոդվածներով. «**Հոդված 7.1. Հանձնաժողովի նախագահը և անդամները** 1. Հանձնաժողովի նախագահը՝ 1) համակարգում և ապահովում է հանձնաժողովի բնականոն աշխատանքը. 2) հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է հանձնաժողովի որոշումներն ու նիստերի արձանագրությունները. 3) իր լիազորությունների շրջանակում ընդունում է հրամաններ, հանձնաժողովի անունից		

			ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, տալիս լիազորագրեր և կնքում պայմանագրեր. 4) իր իրավասությունների սահմաններում ներկայացնում է հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, առանց լիազորագրի հանդես է գալիս հանձնաժողովի անունից: 2. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա հանձնարարությամբ փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը, իսկ նման հանձնարարականի անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի այն անդամը, որն ավելի երկար է աշխատում այդ պաշտոնում: 3. Հանձնաժողովի անդամն իրեն վերապահված լիազորությունների սահմաններում հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, նշագրում հանձնաժողովի որոշումներ և այլ փաստաթղթեր: 4. Հանձնաժողովի անդամների միջև լիազորությունների և աշխատանքային պարտականությունների բաշխման հետ կապված հարցերը կարգավորվում են հանձնաժողովի որոշմամբ: **Հոդված 7.2. Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարումը և դադարեցումը** 1. Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետը լրանում է նրա նշանակման օրվան հաջորդող հինգերորդ տարվա նույն օրը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերի: 2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝ 1) լրացել է նրա պաշտոնավարման առավելագույն տարիքը. 2) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն. 3) նա՝ նախապես տեղեկացնելով վարչապետին, իր հրաժարականի մասին գրավոր դիմումը պաշտոնապես ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին. 4) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած. 5) նրա նկատմամբ կայացվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, մեղադրական դատավճիռ կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով. 6) նա մահացել է: 3. Հանձնաժողովի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել, եթե՝ 1) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել Հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություն. 2) նա երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում բացակայել է Հանձնաժողովի նիստերի առնվազն կեսից. 3) նա մեկ տարվա ընթացքում ավելի քան երկու անգամ անհարգելի բացակայել է Հանձնաժողովի նիստերից. 4) նա խախտել է Հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները.		

			5) նա խախտել է քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը. 6) ի հայտ են եկել փաստեր, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին: 4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սույն օրենքի 7.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձը գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին:»: ***Հոդված 3.*** Օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածները շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 8. Հանձնաժողովի աշխատակազմը** 1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է հանձնաժողովի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) միջոցով, որի ղեկավարումն իրականացնում է աշխատակազմի ղեկավարը: Աշխատակազմի աշխատանքը կանոնակարգվում է սույն օրենքով և հանձնաժողովի որոշումներով: 2. Աշխատակազմն իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով հանձնաժողովին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիաիրավական հարաբերություններին նրա մասնակցությունը: 3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավասությունները, բացառությամբ հայցվոր և պատասխանող հանդես գալու իրավունքից, հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են պատվիրակվել հանձնաժողովի աշխատակազմին: 4. Հանձնաժողովի աշխատակազմի կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, աշխատակիցների թվաքանակը և աշխատակազմի գործունեության կազմակերպմանն առնչվող ներքին կանոնակարգային այլ հարցերը կարգավորվում են հանձնաժողովի որոշումներով: Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ: **Հոդված 9. Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի աշխատակիցների իրավունքների սահմանափակումները և պատասխանատվությունը** 1. Հանձնաժողովի անդամը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքից՝ պայմանով, որ այդ աշխատանքները չեն ֆինանսավորվում կարգավորվող անձանց կողմից: 2. Հանձնաժողովի անդամը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հանձնաժողովի անդամն իր հրապարակային ելույթներում պետք ցուցաբերի քաղաքական զսպվածություն: 3. Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի աշխատակիցներն իրենց		

			պաշտոնավարման ընթացքում չեն կարող ունենալ կարգավորվող անձանց արժեթղթեր, բաժնեմաս կամ դրանցում կատարել ներդրումներ: 4. Հանձնաժողովի անդամն իրավունք չունի իր պաշտոնավարման ժամկետը լրանալու կամ լիազորությունները վաղաժամկետ դադարելու պահից մեկ տարվա ընթացքում զբաղեցնել հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերության՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոն: 5. Սույն օրենքի պահանջները խախտելու համար հանձնաժողովի պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:»: ***Հոդված 4.*** Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 10-րդ հոդվածը: ***Հոդված 5.*** Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 11. Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգումը** 1. Հանձնաժողովը օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ, որոնք իրենց բնույթով կարող են լինել ենթաօրենսդրական նորմատիվ, անհատական կամ ներքին (լոկալ) իրավական ակտեր: 2. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող կամ հանձնաժողովի ներքին կանոնակարգային հարցեր: 3. Հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն գումարվում են ամիսը մեկ անգամ: Հանձնաժողովն ըստ անհրաժեշտության կարող է անցկացնել նաև արտահերթ նիստեր: Հանձնաժողովի հերթական և արտահերթ նիստ հրավիրելու և անցկացնելու կարգը սահմանում է հանձնաժողովը: 4. Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված առանձին հարցեր կարող են նշվել որպես քննարկման ոչ ենթակա հարցեր, եթե դրանք ունեն տեխնիկական կամ ներքին կանոնակարգային բնույթ: Եթե քննարկման ոչ ենթակա հարցի մասին հայտարարելուց հետո այդ հարցի վերաբերյալ ներկայացվում է առարկություն կամ առաջարկություն, ապա այն պետք է քննարկվի և ընդունվի սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով: 5. Հանձնաժողովն իր սահմանած կարգի համաձայն հայտարարում է հանձնաժողովի նիստերի անցկացման վայրը, օրը և ժամը, ինարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց ու հասարակության ներկայացուցիչներին մասնակցել նիստերին՝ հաշվի առնելով իր վարչական շենքի հնարավորությունները, ստանալ օրակարգը և քննարկվող նյութերը, ներկայացնել տեղեկություններ և հանդես գալ ելույթներով: 6. Եթե հանձնաժողովի նիստում քննարկվում են սպառողների համար սահմանվող սակագները, սակագների հաշվարկման մեթոդիկաները, բնագավառների (համակարգերի) կառուցվածքին, սպառողների սպասարկման որակին և պայմաններին վերաբերող հարցեր, ապա հանձնաժողովն այդ մասին ողջամիտ ժամկետում իրազեկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, կարգավորվող ոլորտի իրավասու պետական մարմնին և սպառողների շահերը		

			պաշտպանող կազմակերպություններին՝ հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, հանդես գալ ելույթներով և առաջարկություններով: 7. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի առնվազն երեք անդամ և այն վարում է հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 7.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովի նախագահի պաշտոնեական պարտականությունները կատարող հանձնաժողովի անդամը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ: Որոշումն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի առնվազն երեք անդամ: 8. Հանձնաժողովի կառուցվածքը, հանձնաժողով դիմումների ներկայացման ու քննարկման, նիստերի կազմակերպման և անցկացման կարգը, ինչպես նաև հանձնաժողովի լիազորությունների իրականացմանն առնչվող ներքին կանոնակարգային այլ հարցերը կարգավորվում են հանձնաժողովի որոշումներով: 9. Հանձնաժողովն օրենքով նախատեսված դեպքերում ունի կարգավորվող անձանցից տեղեկություններ պահանջելու և իր ներկայացուցիչների միջոցով վերջիններիս տարածք մուտք գործելու իրավունք: 10. Հանձնաժողովն իր աշխատանքներում իրավասու է վճարովի հիմունքներով ներգրավել անկախ փորձագետների: 11. Հանձնաժողովն ապահովում է իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը զանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային էջի և այլ միջոցներով:»: ***Հոդված 6.*** Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 16. Հանձնաժողովի ֆինանսավորումը** 1. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի կազմում է հաջորդ տարվա իր պահպանման ծախսերի նախահաշիվը և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ բյուջետային գործընթացի համար սահմանված կարգով և ժամկետներում: 2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է սույն օրենքի 18-րդ հոդվածի համաձայն ձևավորված՝ հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.75 գործակցով: Հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծության և սույն օրենքի 18-րդ հոդվածի համաձայն ձևավորված՝ հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունը ուղղվում է հանձնաժողովի պահպանման և կարողությունների զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների սոցիալական ծրագրերի իրականացման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված՝ հանձնաժողովի այլ ֆոնդերի, որոնց չափերը (մեծությունը) սահմանում է հանձնաժողովը: Նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից յուրաքանչյուրից պարգևատրմանն ուղղվող միջոցները չեն կարող գերազանցել հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդի 30 տոկոսը: 3. Հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում		

			է նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից: 4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանձնաժողովի անդամների և աշխատակիցների նյութական խրախուսման և զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների սոցիալական ծրագրերի իրականացման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված՝ հանձնաժողովի այլ ֆոնդերի ծախսման կարգը սահմանում է հանձնաժողովը: 5. Սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան հաշվարկված հանձնաժողովի տարեկան բյուջեի մեկ տոկոսի չափով հաշվարկված գումարը, որը ներառվում է հանձնաժողովի պահպանման ծախսերում, ուղղվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ վերջիններիս կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով: Յուրաքանչյուր տարի հաշվարկված գումարը հասարակական կազմակերպություններին տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված պետական լիազոր մարմնի կողմից: Սույն մասում նշված հասարակական կազմակերպությունների ընտրության, գումարի տրամադրման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»: **Հոդված 7. Եզրափակիչ և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 7-րդ, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող 7.2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում Հանրապետության նորընտիր Նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը: 2. Սույն օրենքի ուժով՝ որպես ինքնավար մարմին, հանձնաժողովի առաջին կազմը ձևավորվում է հետևյալ կերպ՝ Հանրապետության նորընտիր Նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ սույն օրենքով սահմանված կարգով նշանակում է հանձնաժողովի նախագահին և չորս անդամներին պաշտոնավարման հետևյալ ժամկետներով՝ 1) հանձնաժողովի նախագահ՝ 5 տարի. 2) հանձնաժողովի անդամ՝ 4 տարի. 3) հանձնաժողովի անդամ՝ 3 տարի. 4) հանձնաժողովի անդամ՝ 2 տարի. 5) հանձնաժողովի անդամ՝ 1 տարի: 3. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի այն անդամները, որոնք նշանակվել են մինչև Հանրապետության նորընտիր Նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը, շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ օրենքով սահմանված ժամկետի ավարտը, բայց ոչ ավելի, քան սույն հոդվածի 2-րդ		

			մասով նախատեսված նշանակումները կատարելը, մասնավորապես՝ 1) Հանձնաժողովի գործող նախագահը՝ մինչև Հանձնաժողովի նոր նախագահի նշանակումը. 2) Հանձնաժողովի յուրաքանչյուր նոր անդամի նշանակմամբ դադարում են Հանձնաժողովի գործող չորս անդամներից նրա լիազորությունները, ով մյուս անդամներից ավելի շուտ է նշանակվել: Հանձնաժողովի գործող անդամի լիազորությունները դադարում են նաև այն դեպքում, եթե վերջինս սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով նշանակվել է հանձնաժողովի նախագահ կամ հանձնաժողովի անդամ:»:		
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	1. Նախագծի 1-ին հոդվածում նշված «շարադրել հետեյալ խմբագրությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «շարադրել նոր խմբագրությամբ» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Նույնը վերաբերում է նաեւ Նախագծի 3-րդ, 5-րդ եւ 6-րդ հոդվածներին: 2. Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասում նշված «ճյուղային եւ այլ օրենքներով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «այլ օրենքներով» բառով, իսկ Նախագծի 5-րդ հոդվածով խմբագրվող՝ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում նշված «ճյուղային» բառն անհրաժեշտ է հանել, քանի որ անորոշ է, թե ինչ ճյուղային օրենքների մասին է խոսքը, եթե «այլ օրենքներով» եզրույթն իր մեջ ներառում է նաեւ համապատասխան ոլորտը կարգավորող օրենքները: 3. Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասում նախատեսվում են դրույթներ, որոնք վերաբերում են Հանձնաժողովի անդամ նշանակվելու սահմանափակումներին: Այդ առումով հիշյալ մասում նշված է միայն երեք հիմք, որոնց պարագայում անձը չի կարող նշանակվել Հանձնաժողովի անդամ, մինչդեռ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը, բացի Նախագծի նշված հոդվածում սահմանված հիմքերից, նախատեսում է այլ հիմքեր, երբ անձը չի կարող ընդունվել հանրային ծառայության պաշտոնի: Ուստի, անհրաժեշտ է Նախագծի 1-ին հոդվածի 7-րդ մասը համապատասխանեցնել (այդ թվում՝ նաեւ ձեւակերպումների մասով) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին: 4. Նախագծի 2-րդ հոդվածում նշված «հետեյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:	Ամբողջությամբ ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է
3.	ՀՀ ԱԺ պատգամավոր Վահան Հարությունյան	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության	1.Նախագծի հոդված 1-ում առաջարկվող մայր օրենքի 5-րդ հոդվածի 1.5 ենթակետում օգտագործված հիմնավոր գին և ներդրումներին համարժեք հասույթ եզրույթներին տալ հստակ չափորոշիչ:	Ընդունելի չէ. 1.5 ենթակետը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հիմք ընդունելով պատգամավոր Խ. Հարությունյանի առաջարկությունը և ստացել է տնտեսական	Առաջարկությունը մերժվել է

		օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ		հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը:	
			2. Նույն հոդվածի 1.6 ենթակետը թողնել նախորդ խմբագրությամբ 6) մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակումը:	Ընդունելի չէ: Սկզբունքի բովանդակությունը համապատասխանում է ԵԱՏՄ մասին պայմանագրի 20-րդ հավելվածով սահմանված՝ բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընդհանուր սկզբունքներին և ծրագրի պահանջներին:	Առաջարկությունը մերժվել է
			3. Նույն հոդվածի 1.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 7) հանրային ծառայությունների ոլորտում շուկաներ ոչ խտրական մուտքի իրավունքի ապահովումը:	Ընդունելի չէ, տե՛ս 2 կետի հիմնավորումը:	Առաջարկությունը մերժվել է
			4. Նույն հոդվածի նշված մասում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝ 10) կարգավորվող անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների քննարկումը էական նշանակություն ունեցող հանգամանքների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտմամբ:	Ընդունելի չէ: Սա ոչ թե սկզբունք է, այլ հանձնաժողովի՝ իր լիազորությունները պատշաճ կատարելու պարտականություն:	Առաջարկությունը մերժվել է